

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ ՓԻԼԻՍՈՓՈՍՅԻ «ՆԵՐԲՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ  
ԱՍՏՈՒԱԾՆԿԱԼ» ԵՐԿԻ «ՊԱՏՃԱՌ»-ՆԵՐԸ

ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Դավիթ Անհաղթ փիլիսոփայի «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկը<sup>1</sup>, որն առավել հայտնի է սկսվածքի առաջին բառով՝ «Բարձրացուցէք» անվամբ, շատ սիրված ու տարածված է եղել միջնադարում: Այդ են վկայում ճառընտիրներում, դավանաբանական բնույթի ժողովածուներում երկի բազմաթիվ ընդօրինակությունները, հետագա մեկնությունները և «պատճառ»-ները<sup>2</sup>: XI–XII դդ. ականավոր տոմարագետ, փիլիսոփա, աստվածաբան և մատենագետ Հովհաննես Սարկավագի կազմած ուսումնական հաստատություններում հանձնարարելի գրականության ծրագրային ցանկում, որը մեզ է հասել Մխիթար Այրիվանեցու (1230/35–1297/1300) միջոցով («Կարգադրութիւն գրոց սրբոց որք ստուգաբանեցան ի Սարկավագ վարդապետէն և գրեցան յինէն ի տէր Մխիթար վարդապետէս պատմագրէ ի մին տուփ յաւուրս ՃՀ») և որը բաժանվում է «Սուրբ գրքեանք» (Նոր, Հին Կտակարաններ) և «Նուրբ գրեանք» (իմաստասիրական, փիլիսոփայական ու մեկնողական երկեր) մասերի, «Բարձրացուցէք»-ն ընդգրկված է Սուրբ գրքերի մեջ և զետեղված է Նոր Կտակարանից անմիջապես հետո. «Դաւթի փիլիսոփային Բարձրացուցէքն, Աղօթամատոյցն Մահակայ և Մեսրոբայ, Պատարագն սուրբ Մանդակունոյն: Ահա կատարեցան Նոր Կտակարանքն»<sup>3</sup>, այնուհետև թվարկվում են Հին Կտակարանի գրքերը:

«Բարձրացուցէք»-ի հեղինակի, ստեղծման ժամանակի և պատմական միջավայրի մասին հիմնական տեղեկությունները ստանում ենք երկի Նախադրությունից, Գյուտ Ա Արահեզացի (461–478) կաթողիկոսի և Դավիթ փիլիսոփայի նամակներից<sup>4</sup>: Նախադրության մեջ պատմվում է, որ Գյուտ Արահեզացու կաթողիկոսության շրջանում Անտիոքի նահանգի «Աւշին»<sup>5</sup>

<sup>1</sup> Դաւթի Անյաղթ փիլիսոփայի Մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ, Վենետիկ, 1932, էջ 9–25:

<sup>2</sup> «Պատճառ»-ը մեկնողական գրականության տեսակ է, որում վերլուծվում և պարզաբանվում է աստվածաբանական կամ փիլիսոփայական երկի ստեղծման ժամանակը, շարժառիթը, հեղինակային պատկանելությունը: Այն յուրօրինակ մուտք էր մինչև բուն մեկնությանն անցնելը (տե՛ս Մ.-Է. Շիբի նյան. Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում.– Աշտանակ Գ, հայագիտական պարբերագիրք, Երևան, 2000, էջ 36–64):

<sup>3</sup> Մխիթարայ Այրիվանեցոյ Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 33–34:

<sup>4</sup> Տե՛ս Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք եւ թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դաւիթ, էջ 5–8:

<sup>5</sup> Բ. Սարգիսյանը Վենետիկի թիվ 297 ձեռագրում այս տեղանունը կարդացել է «Ատլին» (տե՛ս Սայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենե-

գյուղից Հայաստան են գալիս Կոստանդին, Պետրոս և Թեոդորե անուններով անձինք, ովքեր չէին ընդունում «զՄարիամ Աստուածածին» և «զխաչն Աստուծոյ խաչ»<sup>6</sup>: Այսպես՝ երբ Գյուտ կաթողիկոսը լսում է Դավթի և նրա ընկերների գալու մասին (հավանաբար, խոսքը վերաբերում է վերջիններին ուսումնառությունից վերադառնալուն), նամակով դիմում է Դավթին՝ խնդրելով գրել Հայ եկեղեցու դավանանքը պաշտպանող մի երկ: Պատասխան նամակում Դավթը հանձն է առնում «աւետարանել հնազանդութեամբ»՝ հայցելով կաթողիկոսի աղոթքները<sup>7</sup>:

Միջնադարյան աղբյուրներում «Բարձրացուցէք»-ն աներկբայորեն համարվել է «Սահմանք իմաստասիրութեան» երկի, Պորփյուրի և Արիստոտելի մեկնությունների հեղինակ Դավիթ Անհաղթ փիլիսոփայի ստեղծագործությունը, ինչը, սակայն, մերօրյա ուսումնասիրողների կողմից միանշանակ չի ընդունվում:

«Բարձրացուցէք»-ի «պատճառ»-ները հետաքրքրական վկայություններ են պարունակում ոչ միայն Դավիթ Անհաղթ փիլիսոփայի կյանքի, գործունեության, Ներբողի գրության շարժառիթների և բովանդակության մասին, այլև որոշ տեղեկություններ են հաղորդում սահակ-մեսրոպյան աշակերտների, հայ դպրության սկզբնավորման և V դ. հայոց պատմության այլ հարցերի վերաբերյալ:

«Պատճառ»-ներից հնագույնը՝ «Սկիզբն բարեպաշտութեան Հայաստանեայց ունիմք իմանալ...» սկսվածքով<sup>8</sup>, զետեղված է Ներսես Շնորհալու հեղինակած «Բարձրացուցէք»-ի ընդարձակ մեկնության սկզբում<sup>9</sup>, բայց հաճախ ձեռագրերում հանդես է գալիս որպես առանձին միավոր՝ այս դեպքում կրելով Վարդան Վարդապետի անունը<sup>10</sup>: Ուսումնասիրողներից շատերը, ինչպես Մ. Չամչյանը<sup>11</sup>, Դ. Ալիշանը<sup>12</sup>, Ա. Մադոյանը<sup>13</sup> և այլք, այս «Պատճառ»-ը վերագրում են Ներսես Շնորհալուն, իսկ Ն. Ակինյանն այն ընծայում է XI–XII դդ. մատենագիր, մանկավարժ, Հաղբատի վանքի միաբան Վարդան Հաղբատեցուն<sup>14</sup>: Փ. Անթապյանը, ընդունելով, որ ձե-

---

տիկ, հ. Բ, յօրինեց Հ. Բարսեղ Վ. Մարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 1089), ինչը, կարծում ենք, գուցե գրչական սխալ է, քանի որ «Աւշ»-ն և «Առլ»-ն գրելաձևով նման են իրար:

<sup>6</sup> Դավթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրությունը եւ թողթ Գիւտայ կաթողիկոսի առ Դավթ, էջ 6:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 7–8:

<sup>8</sup> Մ. Մսերյանցն այս «Պատճառ»-ը հրատարակել է Ներսես Շնորհալու [Սրբոյ Հօրն մերոյ Ներսիսի Շնորհալույ Մեկնութիւն «Բարձրացուցէք» ճառի Դավթի Անյաղթ փիլիսոփայի Բ Սուրբ Խաչն.– «Ճռաբաղ», հ. 3, Մոսկուա, 1861–1862, էջ 37–39], իսկ Հ. Քյոսեյանը՝ Վարդան Արևելցու անվամբ (Վ ա ր դ ա ն Ա ր և ւ Է Լ ց ի. Ճառք, Ներբողեանք, աշխատասիրությամբ Հ. Հ. Քյոսեյանի, Երևան, 2000, էջ 285–287):

<sup>9</sup> Տե՛ս, օրինակ, Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարան (ՄՄ), ձեռ. 4253, թ. 103ա (Սեանն Ներսէսի Հայոց կաթողիկոսի Մեկնութիւն բանից Դավթի փիլիսոփային):

<sup>10</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. 1398, թ. 378բ («Տեսութիւն սուղ մտաւոր վասն Բարձրացուցեացն գորարարեալ է Վարդանայ Վարդապետի»), 3276, թ. 112բ («Մեկնութիւն գորարարեալ է Վարդան Վարդապետի յաղագս Բարձրացուցեիցն»):

<sup>11</sup> Տե՛ս Մ. Չ ա մ չ յ ա ն ց. Հայոց պատմություն, հ. Ա, Երևան, 1985, էջ 783:

<sup>12</sup> Տե՛ս Դ. Ա լ ի շ ա ն. Շնորհալի եւ Պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 260–262:

<sup>13</sup> Տե՛ս Ա. Մ ա դ ո յ ա ն. Դավիթ Անհաղթ և Ներսես Շնորհալի.– Դավիթ Անհաղթը՝ հին Հայաստանի մեծ փիլիսոփան (հոդվածների ժողովածու), Երևան, 1983, էջ 527:

<sup>14</sup> Տե՛ս Ն. Ա կ ի ն ե ա ն. Մատենագրական հետազոտություններ.– Քննություն եւ բնագրեր, հ. Ա, Վիեննա, 1922, էջ 82:

ռազմերի խորագրերում հանդիպող Վարդան Վարդապետը նույն Վարդան Արևելցին է (1200–1271), կարծիք է հայտնում, որ շփոթ է տեղի ունեցել. «Վարդան Արևելցին իրապես էլ գրել է մի նման ներբող («պատճառ»-ը ներբող է անվանված – Ա. Մ.), որի մասին շատերն են իմացել և այն շփոթել են Շնորհալու վերոհիշյալ ներբողի հետ»<sup>15</sup>: Փ. Անթապյանը կարծես թե բացառում է, որ նշված Վարդանը կարող է Հաղբատեցին լինել. «Հայտնի չէ, թե երբևիցե նա (Վարդան Հաղբատեցին – Ա. Մ.) հորինե՞լ է ճառեր: Միայն ենթադրվում է (հավանաբար, նկատի ունի Ն. Ակինյանի տեսակետը – Ա. Մ.), որ Դավիթ Քորայրեցին Դավթի «Սուրբ Խաչին» նվիրված ներբողի «Պատճառ»-ի մեջ որպես աղբյուր օգտագործել է նրա մի գործը»<sup>16</sup>: Դավիթ Քորայրեցին (1150–1220), ինչպես ստորև կտեսնենք, իսկապես օգտագործել է վերոնշյալ «Պատճառ»-ը, իսկ «վարդապետն Վարդան այսպես գրե՞լ»<sup>17</sup> արտահայտությունը նշանակում է, որ նա օգտվել է ոչ թե բանավոր, այլ վերջինիս հեղինակած գրավոր աղբյուրից: Այս դեպքում Վարդան Արևելցու տարբերակը բացառվում է, քանի որ նա ապրել է Դավիթ Քորայրեցուց հետո:

Հայտնի է, որ Ներսես Շնորհալին և Վարդան Հաղբատեցին մատենագրական սերտ համագործակցության մեջ են եղել<sup>18</sup>: Ներսես Շնորհալին վերջինիս խնդրանքով է գրել «Բարձրացուցէք»-ի մեկնությունը<sup>19</sup>, ինչպես նաև տաղաչափել այն<sup>20</sup>: Միանգամայն հավանական է Ն. Ակինյանի այն կարծիքը, որ Վարդան Հաղբատեցին հենց ինքն է գրել «Բարձրացուցէք»-ի «Պատճառ»-ը և զետեղել Ներսես Շնորհալու Մեկնության սկզբում<sup>21</sup>: Ամենայն հավանականությամբ, այս հանգամանքով է պայմանավորված ձեռագրերում նշյալ «Պատճառ»-ի ինչպես Ներսես Շնորհալու, այնպես էլ Վարդան Վարդապետի անունով տարածված լինելը: Այս «Պատճառ»-ը ձեռագրերում հանդիպում է նաև հետևյալ սկսվածքով. «Եւ արդ, սկսուք, ուստի արժան է սկսանել նախ զպատճառն ցուցանել և զտեղին, թէ ուր կամ ուստի եղև հարկաւորութիւն ասողին և գրողի...»<sup>22</sup>: Սակայն միայն սկսվածքն է տարբեր, իսկ շարունակությունը բառացիորեն համընկնում է: Ի դեպ, պետք է նշել, որ այս ձեռագրերում ընդգրկված է ոչ միայն «Բարձրացուցէք»-ի «Պատճառ»-ը, այլև Ներսես Շնորհալու Մեկնությունը, սակայն խորագրերում նշված է միայն Վարդան Վարդապետի անունը:

<sup>15</sup> Փ. Անթապյան. Վարդան Արևելցի: Կյանքն ու գործունեությունը, գիրք Ա, Երևան, 1987, էջ 160:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 175:

<sup>17</sup> Գ. Աղ ա ն է ա ն ց. Հնից-Նորից (հնախօսական ուղեւորութիւն).– «Լուսա», 1900, Ա, Տփլիսի, էջ 253:

<sup>18</sup> Տե՛ս Վ. Հ ա կ ո բ յ ա ն. Դավիթ Քորայրեցու հիշատակարանը.– Սեդեկագիր Հայկական ՄՍՈ ԳԱ. հասարակական գիտություններ, Երևան, 1952, -8, էջ 118:

<sup>19</sup> Տե՛ս Ղ. Ա լ ի շ ա ն. նշվ. աշխ., էջ 264, Մ. Չ ա մ չ Ղ ա ն ց. նշվ. աշխ., հ. Գ, Երևան, 1984, էջ 85:

<sup>20</sup> Ն եր ս է տ Շ ն ո Ր հ ա լ ի. Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 249–284:

<sup>21</sup> Տե՛ս Ն. Ա կ ի ն է ա ն. Դավիթ Հարթացի Անյաղթ փիլիսոփայ. կեանքն եւ գործերը, Վիեննա, 1959, էջ 49:

<sup>22</sup> ՄՄ, ձեռ. 3276, թ. 112բ, 8143, թ. 104բ:

Վարդան Հաղբատեցին իր «Պատճառ»-ը սկսում է Գրիգոր Լուսավորչից. «զի ի նմանէ յառաջացան կեանք եկեղեցւոյ եւ ուսումն գիտութեան Հայոց աշխարհիս...»<sup>23</sup>: Շարունակությունը հիմնականում համապատասխանում է Ներբողի Նախադրությանը: Խոսվում է Սուրբ Մահակի և Մեսրոպի գործունեության, հայոց աստվածապարզն նշանագրերի, հայ դպրության սկզբնավորման մասին, թե ինչպես ընտրվեցին «մանկունս ուշեղս, փափկաձայնս եւ երկարոզիս», որոնցից ոմանք ուղարկվեցին «ի կողմանս յունաց յուսումն իմաստութեան ի մայրաքաղաքն յԱթենս, որք ուսեալք եւ տեղեկացեալք թարգմանիչք եղեն ըստ հելլենացոց լեզուին, զի պարտ էր նախ հմտանալ ամենայն իմաստասիրական բառից եւ ոլորակաց եւ ապա համարձակել ի թարգմանութիւն»<sup>24</sup>: Այնուհետև թվարկվում են տարածված կարծիքներն այն մասին, թե ինչպես է Դավիթ փիլիսոփան ստեղծել Խաչին նվիրված ներբողը: Ներկայացվում է տարածված ավանդույթը. Աթենքում յոթ տարի ուսանելուց հետո վարդապետի հրամանով աշակերտը պետք է բարձրանար մի բարձր տեղ և «խաւսել բանս հանճարականս ըստ ժամանակին եւ ըստ պիտոյից լսաւդացն»<sup>25</sup>: Դավիթը կանգնում է Սուրբ խաչի առջև և այնտեղ արտասանում է իր Ներբողը՝ «յուրախութիւն լսաւդաց եւ ի պատիւ Խաչին», քանի որ Աթենքում կուռքերի փոխարեն սկսել էին պաշտել խաչը («փոխանակ կոռցն Խաչն յառաջանայր յԱթենս»)՝<sup>26</sup>: Հաջորդիվ ներկայացվում են մյուս տեսակետները, թե իբր Ներբողն արտասանվել է Խաչվերացի տոնին՝ Կ. Պոլսում կամ Երուսաղեմում՝ Գողգոթայում Ս. Խաչի առջև, կամ էլ Խաչափայտը պարսկական գերությունից ազատագրվելու առթիվ: Որոշ բնագրերում Ներբողի ստեղծման վայրի և շարժառիթների մասին վերոնշյալներից բացի կա նաև հետևյալ վարկածը. «Եւ կէսք՝ թէ ի տեղի ինչ անապատի գրեալ ըստ հակադրութեան երկարնակաց ընդդիմաբանութեան»<sup>27</sup>:

Թվարկելով այս կարծիքները՝ Վարդան Վարդապետը գրում է. «Բայց զի պիտոյ է մեզ յամել յայսպիսի ստահաւդ բանից, այլ գտաք յարինակս հինս առ թարգմանութիւն (այսինքն՝ Ներբողին – Ա. Մ.) մերձ գրեալ» և վերաշարադրում է Նախադրության տեղեկությունները Դավիթ փիլիսոփայի կյանքի և Ներբողի գրության մասին: Նշվում է, որ Դավիթը Հարք գավառի Հերեթ գյուղից էր, Մովսէս Քերթոզի աշակերտը և մեկը նրանցից, ովքեր ուղարկվեցին հելլենական կրթություն ստանալու:

Այնուհետև Վարդան Վարդապետը ներկայացնում է «Բարձրացուցէք»-ի գրության ժամանակը և շարժառիթը. «Ի ժամանակս Վահանայ որդւոյ Մանգնոսի, որդւոյ Վարդանայ, ի հայրապետութեան Գիւտի, որ եւ զկնի Յոհան Մանդակունեցի: Չոր եւ յարկեալ սա ի հայրապետէն յաղագս երկարնակացն լեզուագարութենէ, որք եւ չարք ոմանք ի ժողովոյն Քաղ-

<sup>23</sup> Վ ա ր դ ա ն Ա ր և Ե Լ Գ ի. Ճառք, Ներբողեանք, էջ 285: Թեև հղում ենք Վարդան Արևելցու անվամբ հրատարակված բնագրին, սակայն, ինչպես ցույց տվեցինք, այն պատկանում է Վարդան Հաղբատեցուն:

<sup>24</sup> Նույն տեղում:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 286:

<sup>26</sup> Նույն տեղում:

<sup>27</sup> Մրբոյ Հօրն մերոյ Ներսիսի Շնորհալոյ Մեկնութիւն «Բարձրացուցէք»ճառի..., էջ 38:

կեղոնի եւ յաղանդոյն Նեստորի եկին ի Հայս...»<sup>28</sup>: Վարդան Վարդապետը, տալով Գյուտ և Հովհան Մանդակունի կաթողիկոսների անունները, չի հասակեցնում, թե նրանցից ով է դիմել Դավթին (ըստ Մ. Չամչյանի՝ «գուցե՝ Յովհաննու Մանդակունոյ»<sup>29</sup>), և «յարկեալ սա ի հայրապետէն» արտահայտությունը կարող է երկուսին էլ վերաբերվել: Միգուցե հեղինակը «խուսափել է» այս հարցից, քանի որ Նախադրության մեջ խոսվում է Գյուտի և Հովհան Մանդակունու համաժամանակյա կաթողիկոս լինելու մասին:

Վարդան Հաղբատեցու «Պատճառ»-ի վերջում վերլուծվում է «Դավթի փիլիսոփայի ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ» խորագրի յուրաքանչյուր բառը: Այս վերջին հաստատվածի՝ «Եւ արդ սկիզբն արասցուք նախ ի վերնագրէն եւ ապա ի ճառն մտցուք», սկսվածքը հուշում է, որ Ներբողի ընդարձակ մեկնության հեղինակը, այսինքն՝ Ներսես Շնորհալին, սկսել է վերնագրի մեկնությունից: Կարծում ենք, որ Հաղբատեցու «Պատճառ»-ն ավարտվում է «Եւ այս է ճշմարիտ տեսութիւն, որք կամիցին գիտել»<sup>30</sup> բառերով, իսկ շարունակությունը պատկանում է Շնորհալու գրչին: Այսպես, ըստ մեկնիչի, վերնագրում նախ Դավթի անունն է դրված, հետո միայն պատիվը, «զի բազումք էին հոմանունն Դաւիթք՝ զատուցանէ պատուովն «փիլիսոփա» ասելով»: Այնուհետև բացատրում է «Ներբողեան» բառի նշանակությունը. «Իսկ «ներբողեան» «ներ»-ն բառ է՝ ի քերականիցն իմաստնոցն ասացեալ նախդիր բանի: Եւ դարձեալ «ներբողեան», այսինքն՝ բերկրումն, որով ճոխացուցանէ ի խորութիւն զասացեալսն: Եւ դարձեալ որոշի «ներբողեանն» յինգ եղանակ. ի դէմս, ի յիր, ի ժամանակ, ի տեսիլ, յանբան կենդանիս, ի թռչունս, ի տունկս»<sup>31</sup>: «Ներբող» բառի՝ «բերկրումն» բացատրությանը հանդիպում ենք նաև «Տոնապատճառ»-ում, որտեղ նշվում է, որ Գրիգոր Նյուսացին «բերկրումն անուանէ ի ճառումն, որ առ սուրբ հայրն Եփրեմ»<sup>32</sup>: Իսկ «ներբողեան»-ի՝ հինգ եղանակների բաժանումը վերցված է «Գիրք Պիտոյից»-ից<sup>33</sup>: Շարունակության մեջ բացատրվում է «սուրբ, իսաչ, աստուածընկալ» բառերի իմաստը. «Իսկ սուրբ ասելն ցուցանէ զսրբարարն մեղաց յինքն ընդունելով: Եւ Խաչ ասէ, որ է տեղի չարչարանաց: Եւ աստուածընկալ, զի ընկալաւ զանպարտականն մահու՝ դատապարտեալ վասն մեր»<sup>34</sup>:

<sup>28</sup> Վ ա ղ ա ն Ա ղ ն է լ ց ի Ճ առ ք, Ն եր բ ող ե ա ն ք, է ջ 286: Մ. Մսերյանցը Ներսես Շնորհալու այս Մեկնության առաջին մասի հրատարակության մեջ նշել է միայն նեստորականներին, իսկ Քաղկեդոնի ժողովի անվան փոխարեն կետագծեր դրել (տե՛ս Սրբոյ Հօրն մերոյ Ներսիսի Շնորհալոյ Մեկնութիւն «Բարձրացուցէք» ճառի..., էջ 39): Երկի լատիներեն ամբողջական թարգմանության մեջ նույնպես խմբագրված է Քաղկեդոնի ժողովի հիշատակման հատվածը (տե՛ս Sancti Nersis Clajensis Armeniorum Catholici opera nunc primum ex Armenio in Latinum conversa notisque illustrate, studio et Labore D. Josephi Cappelletti, Venetiis, typis PP. Mekhitaristarum, in insula S. Lazari, 1833, vol. II, p. 244):

<sup>29</sup> Մ. Չ ա մ չ յ ա ն ց. Հ ա յոց պատմություն, հ. Ա, Երևան, 1985, էջ 784:

<sup>30</sup> Վ ա ղ ա ն Ա ղ ն է լ ց ի Ճ առ ք, Ն եր բ ող ե ա ն ք, է ջ 286:

<sup>31</sup> Ն ու յ ն տ եղ ու մ, է ջ 287:

<sup>32</sup> Մ Մ, ձեռ. 3082, թ. 295բ:

<sup>33</sup> Տ է ս Գ իր ք Պ իտոյից, աշխատասիրութեամբ Գ. Մուրադյանի, Երևան, 1993, էջ 95:

<sup>34</sup> Վ ա ղ ա ն Ա ղ ն է լ ց ի Ճ առ ք, Ն եր բ ող ե ա ն ք, է ջ 287:

Ժամանակագրական առումով հաջորդ «Պատճառ»-ը պահպանվել է XIII կամ XIV դդ. թվագրվող եզակի և շատ հետաքրքրական մի գրչագրում, որը հնախուզական ուղևորության ընթացքում Հաղբատ գյուղի Զառնի կոչվող այրում հայտնաբերել է Գյուտ քահանա Աղանյանցը<sup>35</sup>: Թերթերը խոնավությունից մաշված են եղել, սակայն նա կարողացել է վերծանել բնագրի որոշ հատվածներ: Այն կրում է հետևյալ խորագիրը. «Դաւիթ փիլիսոփայի ներբողեան ի սուրբ խաչն Քրիստոսի ասացեալ եւ զպատճառն անընթեր եղեալ Դաւիթ քահանայի»: Ն. Ակինյանի կարծիքով՝ նշված Դավիթ քահանան Վարդան Հաղբատեցու աշակերտ Դավիթ Քոբայրեցին է<sup>36</sup>: Բնագիրն սկսվում է հետևյալ նախադասությամբ. «Յոլովս գանազանս գտաք գրեալ պատճառ ներբողենիս անհաւաստիս, եթէ ուր և է ը աղագաւ և յորմէ հարկաւորեալ գրեաց մեծիմաստ Դաւիթ փիլիսոփայ...»<sup>37</sup>: Ելնելով այն իրողությունից, որ այս հատվածը հաջորդում է անմիջապես խորագրին (համենայն դեպս, այդպես է երևում Աղանյանցի նկարագրությունից), կարելի է ասել, որ բնագրի սկիզբն ամբողջական է և թափված մասեր չունի:

Թվարկելով Ներբողի ստեղծման մասին վերոնշյալ «անհավաստի» պատմությունները՝ Քոբայրեցին գրում է. «Այլ ի ճշմարտատես արանց և քննողաց ի պատմութենէ զժամանակն և զպատճառն այսպէս գտաք [գրեալ]»<sup>38</sup>: Փաստորեն, օգտվելով հիմնականում Վարդան Հաղբատեցու «Պատճառ»-ից, ինչպես արդեն նշեցինք, Դավիթ Քոբայրեցին օգտագործել է նաև այլ աղբյուրներ՝ առավել մանրամասն ներկայացնելով որոշ տեղեկություններ: Նա նույնպես գրում է գրերի գյուտի և հայ դպրության սկզբնավորման մասին՝ հավելելով, որ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը Թեոդոս կայսեր ու Հայոց Վռամշապուհ արքայի հրամանով «յամենայն տեղիս» դպրոցներ կարգեցին: Այստեղ Թեոդոս կայսեր անվան հիշատակումը նշանակում է, որ դպրոցներ են բացվել նաև Հայաստանի բյուզանդական մասում<sup>39</sup>: Ինչպես վերը նշվեց, ըստ Վարդան Հաղբատեցու՝ աշակերտներից կատարելագույններն ուղարկվեցին Աթենք՝ հունական կրթություն ստանալու, մինչդեռ Դավիթ Քոբայրեցին ավելացնում է Բյուզանդիան և Ալեքսանդրիան, ինչպես նաև շեշտում ոչ միայն հունարեն, այլև ասորերեն լեզուն ուսանելու մասին<sup>40</sup>. «առաքեցին [յիմաստա]սիրո[ւթեան մայրաք]աղաքն [ի Բյուզանտիոն, եւ յԱթէնս և յԱղէք-

<sup>35</sup> Տե՛ս Գ. Աղանյանցի նշվ. աշխ., էջ 252–254:

<sup>36</sup> Ն. Ակինյան. Դաւիթ Հարթացի Անյաղթ փիլիսոփայ. կեանքն եւ գործերը, էջ 49–50: Պ. Մուրադյանը նույնպես այս «Պատճառ»-ը ներկայացնում է որպես Քոբայրեցունը (Պ. Մուրադյան. Դաւիթ Քոբայրեցին և նրա «Պատճառները».- «Գանձասար», հ. Ե, Երևան, 1994, էջ 158–168): Մենք ևս համամիտ ենք այս կարծիքին:

<sup>37</sup> Գ. Աղանյանցի նշվ. աշխ., էջ 253:

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> Հմմտ. Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Խորենացի), Քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, լրացումները՝ Ա. Բ. Մարգիսեանի, Երևան, 1991, էջ 337:

<sup>40</sup> Կարծում ենք, Քոբայրեցին այս մասում նույնպես օգտվել է Խորենացուց [հմմտ. Խորենացի, էջ 341 («առաքեն ի Միջագետս ի քաղաքն Եդեսիայ...», զի այնր ի Բիւզանդիոն առաքեսցին», էջ 343 («վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղէքսանդրիա...»)]:

ասնորիս, այլև ի կողմանս ասորոց ուսանել զգիր եւ զլեզու յունարէն], հելլենական եւ ասորերէն»<sup>41</sup>:

Եթե Վարդան Հաղբատեցին Դավիթ Անհաղթին համարում է Մովսէս Քերթողի աշակերտը, ապա՝ Դավիթ Քոբայրեցին օգտագործում է հետևյալ բնորոշումը. «Դաւիթ փիլիսոփա համալծորդ Մովսէսի Խորենացոյ, Գառնկան, եւ Եզնկա, Մամբրէի և Կորեան»<sup>42</sup>: «Պատճառ»-ներում չի արտացոլվել Դավթի՝ Մովսէս Խորենացու քրոջ որդին լինելը, ինչպես նշված է «Բարձրացուցէք»-ի Նախադրության մեջ<sup>43</sup>: Վերոնշյալ հաստից, որը, նույնությամբ պահպանվել է «Գիրք Պատճառաց»-ում, ըստ Մ.-Է. Շիրինյանի, կարելի է դիտել որպես «մի փաստարկ հոգուտ այն կարծիքի, որ Խորենացին ապրել և գործել է 5-րդ դ.»<sup>44</sup>: Նույնը կարելի է ասել նաև Դավիթ Անհաղթի մասին: Հետաքրքրական է, սակայն, որ «պատճառ»-ներից և ոչ մեկում չի նշվում «Անհաղթ» պատվանունը: Ավելին, ինչպես ասվում է Հաղբատեցու (Շնորհալու), «Պատճառ»-ում հենց «փիլիսոփա» (և ոչ թե «անհաղթ», ինչպես ընդունված է մեզանում) պատվանունով է, որ այս Դավիթը պետք է զատվեր այլ Դավիթներից:

Դավիթ Քոբայրեցու «Պատճառ»-ում թվարկվող աշակերտների անունները տարբեր են Նախադրության մեջ նշվողներից. Եզնիկի և Մամբրէի կողքին կա Կորյունի և Գառնիկի անունները, որոնք բացակայում են Նախադրության մեջ, մինչդեռ Մուշեն, Եղիշեն, Արձան և Ադան Արծրունիները չեն հիշատակվում: Մա նույնպես վկայում է այն մասին, որ Դավիթ Քոբայրեցին, բացի Նախադրությունից և Վարդան Վարդապետի «Պատճառ»-ից (հիշենք, որ Վարդան Հաղբատեցին աշակերտներից ոչ մեկի անունը չի նշում), օգտվել է նաև այլ աղբյուրներից:

Ի տարբերություն Վարդան Հաղբատեցու՝ Դավիթ Քոբայրեցին հստակ նշում է, որ Գյուտ կաթողիկոսն է պատվիրել Դավիթ փիլիսոփային գրել Խաչին նվիրված ներբողը, իսկ «ի ձերութեան հասեալ ժամանակ» արտահայտությունը վկայում է, որ այս իրադարձությունները տեղի են ունեցել Գյուտի կաթողիկոսության վերջին շրջանում: Այնուամենայնիվ, Քոբայրեցին գրեթե ամբողջությամբ մեջբերում է Հաղբատեցու «Պատճառ»-ի համապատասխան հաստիցը Ներբողի գրության ժամանակի, այն է՝ Մագնոսի որդի Վահանի օրոք գրված լինելու մասին՝ ուղղակիորեն նշելով իր աղբյուրը. «Բայց Վարդան վարդապետն այսպէս գրէ» (միգուցե ակնարկելով, որ այնքան էլ համաձայն չէ վերջինիս հետ, սակայն անհրաժեշտ է համարել նշել իր ուսուցչի կարծիքը): Այս «Պատճառ»-ում ևս, որպես Ներ-

<sup>41</sup> Գ. Ա դ ա ն է ա ն ց. նշվ աշխ., էջ 253: Քոբայրեցու բնագրի՝ խոնավությունից աղճատված որոշ հատվածներ, որոնք հրատարակության մեջ բաց են թողնված, վերականգնել ենք մատենագիր Գրիգոր Աբասյանի (XII–XIII դդ.) բնագրի հիման վրա՝ դնելով դրանք ուղղանկյունաձև փակագծերում:

<sup>42</sup> Նույն տեղում:

<sup>43</sup> Ըստ որոշ աղբյուրների՝ Դավիթը Մովսէսի քեռորդին էր (Լիակատար Վարք եւ վկայարանութիւն Սրբոց, որք կան ի հին Տօնացոյցի եկեղեցոյ Հայաստանեայց, հ. Ե, Վենետիկ, 1813, էջ 316): Հավանաբար, գրչական շփոթմունք է եղել «քուերորդի» և «քեռորդի» բառերի միջև:

<sup>44</sup> Մ.-Է. Շիրինյան. Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը. հայկական և հունական դասական ու բյուզանդական աղբյուրների բաղադրությամբ, Երևան, 2005, էջ 32:

բողի գրության հիմնական առիթ նշվում է Հայաստանում նեստորականների գործունեությունը, ովքեր «ի ժողովոյն Քաղկեդոնի եկին ի Հայս»՝ խեղաթուրելով հայ եկեղեցու վարդապետությունը: «Պատճառ»-ում մեջբերվում է Դավիթ փիլիսոփայի՝ Գյուտ կաթողիկոսին ուղղված նամակի ոչ միայն սկսվածքը, այլև մի ընդարձակ հատված: Ցավոք, մենք հնարավորություն ունենք այս բնագիրը վերլուծել այնքանով, որքանով որ այն ընթերցել է Գյուտ քահանա Աղանյանը<sup>45</sup> և որքանով որ կարող ենք վերականգնել Գրիգոր Աբասյանի խմբագրած «Պատճառ»-ի հիման վրա: Ուստի, կարող ենք միայն ենթադրել, որ Դավիթ Քոբայրեցու «Պատճառ»-ն ավարտվում է Դավթի նամակից ընդարձակ մեջբերումով:

Գ. Աբասյանի կազմած «Գիրք Պատճառաց» պայմանական վերնագիրը կրող ժողովածուում<sup>46</sup> «Սկիզբն և Պատճառ Բարձրացուցեացն և տեսութիւն»-ը<sup>47</sup> ընդգրկված է «Նուրբ Գրեանք»-ի մեջ: Հեղինակն ամբողջությամբ վերցրել է Դավիթ Քոբայրեցու «Պատճառ»-ը, կատարել որոշ կրճատումներ և հավելումներ՝ օգտվելով նաև Վարդան Հաղբատեցուց, Ներբողի Նախադրությունից և այլ աղբյուրներից: Այս «Պատճառ»-ի սկսվածքն է՝ «Հրաշագործողն արարածոց Աստուած, որ ի սկզբանէ գոյացոյց զամենայն...»: Սկզբում հեղինակը մեկ նախադասությամբ ամփոփում է քրիստոնեական վարդապետությունը՝ շեշտելով աստվածային տնօրինության կարևորագույն հանգրվանները՝ աշխարհի արարումը և մարդու ստեղծումն Աստծու պատկերով, դրախտային կյանքի վայելքը, դրախտից վտարումը, մահը, երկրորդ Ադամի՝ Քրիստոսի աշխարհ գալը և մարդկության ազատագրումը մահից: Այնուհետև անդրադառնում է Թադեոս առաքյալի միջոցով Հայաստանում քրիստոնեության տարածմանը, Գրիգոր Պարթևի լուսավորչական գործունեությանը: Նա մեծագույն ակնածանքով է խոսում Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և Վռամշապուհ արքայի մասին, ներկայացնում աստվածային տեսիլքով ոչ միայն հայոց, այլև վրաց ու աղվանից գրերի ստեղծումը. «Եւ այնչափ մեծագոյն էր պարգեւն, մինչ ոչ միայն հայոց, այլեւ վրաց եւ աղուանից արար գիրս հաստատունս»<sup>48</sup>: Գ.

<sup>45</sup> Այս հետաքրքրական և եզակի բնագրի հետքերով գնալով՝ փորձեցինք ճշտել, թե որտեղ են Գյուտ քահանա Աղանյանցի՝ Հաղբատում գտած ձեռագրերը: «Լումա»-ի նույն՝ 1900 թ. համարում Աղանյանցը խոսում է Թիֆլիսի Հայոց վանքի մայր եկեղեցու բակում Ավետիս Ղուկասյանի հովանավորությամբ թանգարանի կառուցման մասին: 1900 թ. սեպտեմբերին բացված թանգարանի տնօրեն է դառնում Գյուտ քահանան, հավանաբար, իր գտած ձեռագրերն էլ տեղափոխում այնտեղ: Հայաստանի ազգային արխիվում գտանք 1913 թ. գրված մի փաստաթուղթ, որում Ս. Պետերբուրգի Գիտությունների ակադեմիայի քարտուղարը շնորհակալություն է հայտնում Գյուտ քահանային՝ Հաղբատի վանքի մոտակայքում գտնվող Ծակ քար կոչվող քարանձավից 1899–1900 թթ. հնագիտական պեղումների արդյունքում գտնված ձեռագրերը իրենց հանձնելու համար (Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 332, ց. 1, գ. 422, թ. 1): Հնարավոր է, որ Չառնիից գտնված այս պատառիկն էլ դրանց թվում է եղել, սակայն Գ. Յուզբաշյանի կազմած Ս. Պետերբուրգի հայկական ձեռագրերի ցուցակում այն առկա չէ (Տե՛ս Կ. Ն. Юзбашян. Армянские рукописи в петербургских собраниях, каталог.—Православный Палестинский сборник, вып. 104. СПб., 2005):

<sup>46</sup> Տե՛ս Ս. (Է.) Շիրիսյան, Գ. Խաչատրյան. «Գիրք Պատճառաց».— «Աշտանակ», հայագիտական պարբերագիրք, Դ, Երևան, 2011, էջ 18–43:

<sup>47</sup> Տե՛ս Ն. Ա. Д о н ц. Дионисий Фракийский и армянские толкователи. Пг., 1915, XXVIII–XXXII. Ս. (Է.) Շիրիսյան. Հայոց գրերի գյուտն ըստ «Գիրք պատճառաց»-ի.— «Էջմիածին», 2004, հուլիս-օգոստոս (Է–Ը), էջ 89–91:

<sup>48</sup> Ս. (Է.) Շիրիսյան. Հայոց գրերի գյուտն ըստ «Գիրք պատճառաց»-ի, էջ 89:



Աբասյանը քննում է<sup>49</sup>, թե ինչպես են մարդիկ ձեռք բերել գրելու շնորհը. Ադամի՝ դրախտից վտարումից հետո բոլորը մի գիր ունեին. ըստ ոմանց՝ եբրայերեն, ըստ մյուսների՝ արաբերեն: Երբ Բաբելոնի աշտարակաշինությունից հետո խառնվեցին լեզուները, գրերը նույնպես զանազանվեցին իրարից: «Պատճառ»-ի ներածական մասը, որն ամփոփ ներկայացնում է աշխարհի և քրիստոնյա Հայաստանի պատմության կարևոր հանգրվանները, ավարտվում է Մեսրոպ Մաշտոցի կողմից մանուկների հավաքագրման և հայոց գրերի ուսուցանման պատմությամբ:

«Եւ արդ, այսպիսի խնդրոյ դնեն վարդապետք եկեղեցոյ սկիզբն եւ պատճառ այսպէս» մուտքից հետո Գ. Աբասյանը գետեղել է Դավիթ Քոբայրեցու «Պատճառ»-ը՝ խմբագրելով որոշ հատվածներ: Այսպես՝ այն մասում, որտեղ Քոբայրեցին վկայակոչում է Վարդան Վարդապետին, Գ. Աբասյանը, առանց նշելու վերջինիս անունը, գրում է. «Եւ յայլոց ասի, թէ էր սա ի ժամանակս Հայրապետին Հայոց Յովհաննու Մանդակունոյ եւ Վահանայ՝ որդիւնոյ Մանգնոսի, որդոյ Վարդանայ: Այլ մեզ ստուգելի թուի, Գիւտայ հայրապետութեամբն եղեալ խնդիրս» (ընդգծումը մերն է – Ա. Մ.)<sup>50</sup>: Փաստորեն, Գ. Աբասյանն իր հերթին քննել է այս խնդիրը, սակայն տարօրինակ է, որ հաջորդ հատվածում, հետևելով Վարդան Հաղբատեցուն, գրում է. «Եւ էր մեծն Դավիթ փիլիսոփայ ... ի ժամանակս Վահանայ որդոյ Մանգնոսի, որդոյ Վարդանայ, եւ ի ժամանակս Յովհաննու Մանդակունոյ»<sup>51</sup>, այս դեպքում առանց իր կարծիքը նշելու: Միննույն հարցի վերաբերյալ տարբեր տեսակետների արտացոլումը հաստատում է, որ Գ. Աբասյանը, վերցնելով հիմնականում Քոբայրեցու «Պատճառ»-ը, օգտվել է նաև ինչպես Վարդան Հաղբատեցուց, այնպես էլ այլ աղբյուրներից, կատարելով ինքնուրույն ուսումնասիրություն, սակայն անփոփոխ պահպանել է տարբեր աղբյուրներից վերցված, հաճախ միմյանց հակասող տեղեկությունները:

Հետաքրքրական մի հատված կա վերոնշյալ բոլոր «Պատճառ»-ներում՝ կապված Քաղկեդոնի ժողովի և նեստորականների հետ: Նախ հիշեցնենք, որ Ներբողի Նախադրության մեջ առհասարակ չի նշվում ո՛չ նեստորականների, ո՛չ էլ Քաղկեդոնի ժողովի անունը, այլ թվարկվում են կոնկրետ անձինք: Վարդան Հաղբատեցու «Պատճառ»-ի այս հատվածում, ինչպես տեսանք, վերոնշյալ անձանց փոխարեն նշվում են Նեստորը և Քաղկեդոնի ժողովը («ոմանք ի ժողովոյն Քաղկեդոնի և յաղանդոյն Նեստորի»): Դավիթ Քոբայրեցին այս հարցում ավելի կտրուկ է արտահայտվում. «զի որ ի ժամանակին յայնմիկ տարածեալ աղանդն նեստորականացն, որք ի ժողովոյն Քաղկեդոնի եկին ի Հայս...»<sup>52</sup>: Ինչևէ, երկու հեղինակներն էլ արտահայտել են Հայոց եկեղեցում և, առհասարակ, արևելյան եկեղեցիներում ընդունված այն ընկալումը, որ քաղկեդոնականության հիմքում ընկած է

<sup>49</sup> Չենք կարող միանշանակ պնդել, որ այս հատվածի հեղինակը Գրիգոր Աբասյանն է: Չի բացառվում նաև, որ նա դա պարզապես վերցրել է այլ հեղինակներից ու ընդգրկել իր կազմած ժողովածուում:

<sup>50</sup> Մ. (Է.) Շ ի ր ի ն յ ա ն. Հայոց գրերի գյուտն ըստ «Գիրք պատճառաց»-ի, էջ 90:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 91:

<sup>52</sup> Գ. Ա դ ա ն ե ա ն ց. նշվ. աշխ., էջ 254:

Նեստորի վարդապետությունը, և որ Եփեսոսի տիեզերածոդովում (431 թ.) նգովված նեստորականները Քաղկեդոնի ժողովից հետո սկսեցին կրկին հզորանալ: Մինչդեռ «Գիրք պատճառաց»-ում Գ. Աբապանը չի հիշատակում Քաղկեդոնի ժողովը, այլ նշում է միայն նեստորականներին. «Էր ի ժամանակին յայնմիկ տարածեալ աղանդն Նեստորի»<sup>53</sup>: Փաստորեն, այս հատվածում ևս նա խմբագրում է իր հիմնական աղբյուրը՝ Դավիթ Քոբայրեցու «Պատճառ»-ը՝ առավել մոտենալով «Բարձրացուցէք»-ի Նախադրությանը: Գ. Աբապանը ներկայացնում է Նեստորի վարդապետության հիմնական դրույթները. «որք ոչ աստուածածին զՄարիամ ասէին, եւ ոչ զխաչն աստուածընկալ եւ Աստուծոյ խաչ: Քանզի յանդգնէին սոսկ մարդ ասել զբարձրացեալն ի վերայ խաչին եւ զխաչն լոկ ի զաւրութենէ Աստուածն բանի դաւղանջէին: Այսպէս եւ զՄարիամ մարդածին, եւ ոչ աստուածածին համբաւէին»: Այնուհետև մեկ նախադասությամբ լավագույնս ամփոփում է Ներբողի հիմնական ասելիքն ու բովանդակությունը. «սուրբն այն եւ զսբանչելի Դաւիթ, ի բազմախոռոն վկայութեանց եւ արինակաց, ի Հնոց և ի Նորոց առնու յԱղամայ, եւ ի դրախտէն մինչ ի միւս անգամ գալուստն: Եւ համեմատէ զաւրինակն ընդ ճշմարտութեանս, որ ի Քրիստոսէ, եւ ցուցանէ զՄարիամ Աստուծոյ ծնող եւ զխաչ Աստուծոյ խաչ»<sup>54</sup>:

Գ. Աբապանը չի անդրադառնում Ներբողի խորագրին, այլ վերլուծում է թե ինչու է Դավիթ փիլիսոփան իր ստեղծագործությունն սկսում ոչ թե ինքնուրույն իմաստասիրական մտքերով, այլ Մարգարեի խոսքով (իմա՝ Դավթի Սաղմոսով). «Ասի յոմանց թէ վասն գերակատար իմաստութեանն կամեցաւ ինքնախաւսութեամբ դնել սկիզբն եւ ոչ ուստեք առնուլ վկայութիւն: Եւ մինչ զայս ած զմտաւ, արգելաւ իմաստութիւնն եւ ոչ կարաց խաւսել: Այլ ոչ է կարծել ի դէպ այս նմա, զի որպէս յայլ ամենայն կեանսն իւր խոնարհութեամբն էր պայծառ, առաւել այսու»<sup>55</sup>: Նույն միտքը հանդիպում ենք Ներսես Շնորհալու՝ «Բարձրացուցէք»-ի մեկնության մեջ. «Ասէն ոմանք, թէ եղ մտի չառնուլ վկայութիւն յայլոց և յորժամ կամեցաւ ասել ընդասացութեամբ փակեցաւ, մինչ զայն, որ ի բերան կա մանկանց և ծերոց, Հոգին ետ բարբառել, այլ ոչ է այս խորհուրդ այնպիսոյ առն մտաց, զի ոգիք մարգարէից մարգարէից հնազանդին»<sup>56</sup>: Հավանաբար, Գ. Աբապանն օգտվել է Ներսես Շնորհալու մեկնությունից կամ, գուցէ, այլ բանավոր աղբյուրից: Ինչնէ, նա այլ՝ Շնորհալուց տարբեր կերպ է մեկնաբանում Դավիթ փիլիսոփայի կողմից Դավթի Սաղմոսը բնաբան ընտրելու հանգամանքը<sup>57</sup>: Մակայն, «ասի յոմանց» և «ասէն ոմանք» ար-

<sup>53</sup> Մ. (Է.) Շ ի ր ի ն յ ա ն. Հայոց գրերի գյուտն ըստ «Գիրք պատճառաց»-ի, էջ 90:

<sup>54</sup> Նույն տեղում:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 91:

<sup>56</sup> ՄՄ, ձեռ. 1409, թ. 291բ:

<sup>57</sup> Ներսես Շնորհալու նշած երկու պատճառներից առաջինն այն է, որ Դավիթ փիլիսոփան սկսել է Դավիթ մարգարեի սաղմոսով «յաղագս համանունութեան»: Իսկ երկրորդ պատճառն այն է, որ Դավիթը մարգարեներից ամենաշատն է անդրադարձել Տիրոջ Օննդյանը, Խաչելությանը և այլ տնօրինական իրողություններին. «զի աւելի քան զամենայն մարգարէսն խօսեցաւ իբրու դէմ յանդիման ի ծնունդն Տեառն և ի Խաչելութիւնն և յայլ տնօրինականսն» (ՄՄ, ձեռ. 1409, թ. 291բ):

տահայտությունները ցույց են տալիս, որ «Բարձրացուցեք»-ի ստեղծման մասին տարածված է եղել ավանդազրույց և այն ընկալվել է ոչ թե մարդկային մտքով, այլ աստվածային իմաստությամբ, Ս. Հոգով գրված մի ստեղծագործություն: Շատերի կողմից Դավիթը ներկայացվել է իբրև «մի մեծամիտ փիլիսոփա», ով փորձել է «ինքնախոսությամբ» սկսել Ներբողը՝ չցանկանալով օգտվել Ս. Գրքից, ինչի արդյունքում նույնիսկ արգելվել է նրա միտքը: Սակայն, ըստ Գ. Աբասյանի, այս պատմությունը չի կարող իրական լինել, քանի որ Դավիթ փիլիսոփայական ամբողջ կյանքում խոնարհ է եղել, իսկ Ներբողը սկսել է Մարգարեի խոսքով՝ հետևելով ընդհանրական եկեղեցու նշանավոր հայրապետներից Գրիգոր Նազիանզացուն. «զի որ պէս Աստուածաբանն Գրիգոր ի մարգարէէն սկսանի ի Ծննդեան ճառին յասելն. «Ուրախ լիցին երկինք եւ ցնծասցէ երկիր», նոյնպէս եւ սայ առնէ, յասելն՝ «Բարձրացուցեք զՏէր Աստուած մեր»<sup>58</sup>: Հետաքրքրական է, որ Գ. Աբասյանը համեմատում և մեջբերում է Նազիանզացու «Ծննդյան ճառի» սկիզբը, մինչդեռ հայ մատենագրության մեջ հայտնի է վերջինիս «Ներբողեան ի սուրբ Խաչն աստուածընկալ» երկը<sup>59</sup>, որը, ի դեպ, նույնպես սկսվում է Մաղմուտով: «Տոնապատճառ» ժողովածուում Դավիթի «Բարձրացուցեք»-ն իր կարևորությամբ համեմատվում է Գրիգոր Նազիանզացու «Ծննդյան ճառի» հետ<sup>60</sup>, որտեղից էլ, հավանաբար, Գ. Աբասյանը վերցրել է այս միտքը: Ըստ նրա՝ երկրորդ պատճառն այն է, որ Դավիթը, տեսնելով, որ Նոր Կտակարանը հիմնված է մարգարեների վրա, նույնն էլ ինքն է ցանկացել անել: «Պատճառ»-ի վերջում հեղինակը կոչ է անում հավատով, սրբությամբ, խոնարհությամբ, ողորմությամբ և չարչարակցությամբ փառավորել Փրկչին, այնպես, ինչպես «Մարգարէն ձայնէ ի հեռաստանէ, գոչեաց զայսոսիկ Դաւիթ այլովքն հանդերձ»<sup>61</sup>:

«Բարձրացուցեք»-ի մասին հավելյալ փոքրիկ տեղեկություն կա նաև «Սահմանք իմաստասիրութեան» երկի՝ Դավիթ Քորայրեցու գրչին պատկանող «պատճառ»-ի մեջ. «Իսկ ի Բարձրացուցեացն սկիզբն յետոյ եղին զնորա անունն: Եւ Սահմանաց գիրս ոչ գրեալ եղև յայնժամ. եւ այլ յետոյ չարարին փոյթ դնել զանուն նորա: Ասաց սա չորս գիրք. ա. զԲարձրացուցեքն, բ. զՍահմանացն, գ. զՔերականին մեկնիչն. դ. զՊէտքն...»<sup>62</sup>: «Սահմանաց գիրս ոչ գրեալ եղև յայնժամ» արտահայտությունից կարելի է հասկանալ, որ «Բարձրացուցեք»-ը գրվել է կա՛մ «Սահմանք»-ից առաջ, կա՛մ էլ, միգուցե, «Սահմանք»-ի հայերեն թարգմանությունից առաջ:

«Բարձրացուցեք»-ի հնագույն՝ 1688 թ. Նոր Ջուղայի հրատարակությունում արտացոլվել է միայն Ներբողի՝ Կ. Պոլսում արտասանած լինելու վարկածը, քանի որ ամբողջությամբ զետեղված է «Գիրք Էակաց»-ը, որն

<sup>58</sup> Մ. (Է.) Շ ի թ ի ն յ ա ն. Հայոց գրերի գյուտն ըստ «Գիրք պատճառաց»-ի, էջ 91:

<sup>59</sup> Բնագրի հրատարակությունը տե՛ս «Բազմավեպ», 1933, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 444-448: Ըստ ավանդության՝ այն թարգմանել է Մովսես Խորենացին: Այս երկի հունարեն բնագիրը կորած է և այն պահպանվել է միայն հայերեն թարգմանությամբ (տե՛ս Գ. Զ ա թ բ - հ ա ն ա լ է ա ն. Հայկական թարգմանութիւնք նախնեաց (դար Դ-ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 354):

<sup>60</sup> Տե՛ս օրինակ, ՄՄ, ձեռ. 2039, թ. 307բ, 4139, թ. 347ա, 3082, թ. 295բ:

<sup>61</sup> Մ. (Է.) Շ ի թ ի ն յ ա ն. Հայոց գրերի գյուտն ըստ «Գիրք պատճառաց»-ի, էջ 91:

<sup>62</sup> Н. АДОНИ. Եզվ. աշխ., XXXIII:

ընդմիջարկվում է Դավթի Ներբողով (այն հատվածում, երբ Մարկիանոս կայսրը Դավթին հորդորում է Խաչի տոնին ճառ արտասանել)<sup>63</sup>: Երկի երկրորդ հրատարակիչ Մարտիրոս դպիր Կոստանդնուպոլսեցին ևս իր առաջաբանում համառոտակի ներկայացնում է միայն «Գիրք Էակաց»-ում հաղորդվող տեղեկությունները՝ հավանաբար հետևելով առաջին հրատարակությանը՝ իր կողմից հավելելով, թե Ներբողն արտասանվել է Ս. Սոֆիայի տաճարում<sup>64</sup>: Կարծում ենք, որ հրատարակիչներն անձանոթ են եղել Նախադրությանը և վերոնշյալ միջնադարյան «պատճառ»-ներին:

Այսպիսով, մեզ են հասել Դավիթ Անհաղթ փիլիսոփայի «Ներբողեան ի սուրբ խաչն աստուածընկալ» երկի՝ Վարդան Հաղբատեցու, Դավիթ Քոբայրեցու հեղինակած «պատճառ»-ները: Գ. Աբասյանն իր «Գիրք պատճառաց»-ում տեղադրել է Քոբայրեցու «Պատճառ»-ը՝ խմբագրելով և ճշգրտելով որոշ խնդրահարույց դրույթներ ու կատարելով սեփական՝ խիստ հետաքրքրական հավելումները: Այս հեղինակներն օգտվել են միմյանցից, նաև օգտագործել «Բարձրացուցեք»-ի Նախադրությունը, Գյուտ կաթողիկոսի և Դավիթ Անհաղթի նամակները և այլ հին աղբյուրներ: Ն. Ակինյանը կարծում է, որ Վարդան Հաղբատեցին ունեցել է ավելի հին աղբյուրներ, քան Ներբողի Նախադրությունն է, անգամ առաջարկում է վերակազմել այն Վարդանի «Պատճառ»-ի հիման վրա<sup>65</sup>: Այնուամենայնիվ, Հաղբատեցու «այլ գտաք յարինակս հինս առ թարգմանութիւն մերձ գրեալ»<sup>66</sup> արտահայտությունը հուշում է, որ Ներբողի հնագույն օրինակները կից «առաջաբան» են ունեցել: Իսկ Դավիթ Անհաղթի՝ Գյուտ կաթողիկոսին ուղղված նամակի վերաբերյալ Դավիթ Քոբայրեցու՝ «Որ եղեւ գրեալ յամենայն արինակս»<sup>67</sup> և Գրիգոր Աբասյանի՝ «գտաք ի գիրս Թարգմանչացն ի սկիզբն այսր ճառիս»<sup>68</sup> արտահայտությունները վկայում են, որ «Բարձրացուցեք»-ի հնագույն օրինակների սկզբում գետեղված է եղել նաև Դավթի նամակը, որը նրանք մեջբերում են գրեթե ամբողջությամբ: Կարծում ենք, որ Նախադրության և նամակների մեզ հասած օրինակներն ունեցել են ավելի հին տարբերակներ, ինչի մասին պարզորոշ վկայում են «Պատճառ»-ների հեղինակները:

«Պատճառ»-ներում քննվում է, թե ինչ պայմաններում, երբ և որտեղ է գրվել «Բարձրացուցեք»-ը: Հեղինակներն աներկբա ընդունում են այն փաստը, որ նշյալ գործը գրել է V դ. ապրած, Գյուտ Արահեզացի և Հովհան Մանդակունի կաթողիկոսների օրոք գործած Դավիթ փիլիսոփան՝ Հարք գավառի Հերեթ («Գիրք պատճառաց»-ում՝ «Հերթեւն») գյուղից, Սովսես Խորենացու աշակերտը և գործակիցը: Գրեթե նույն ժամանակաշրջանում ապրած հեղինակների (Վարդան Հաղբատեցին Դավիթ Քոբայրե-

<sup>63</sup> Տե՛ս Գիրք ժողովածոյ ընդդէմ Երկարնակաց, Նոր Զուղայ, 1688, էջ 5–272 (ներբողը՝ էջ 204–261):

<sup>64</sup> Տե՛ս Գիրք և ճառք ոգեշահ արարեալ յուղղափառ և յաստուածաբան վարդապետաց եկեղեցոյ, ի տպարանի Սարգսի ի Բուզանդիա, 1722, էջ 441:

<sup>65</sup> Տե՛ս Ն. Ա կ ի ն է ա ն. Դավիթ Հարքացի Անյաղթ փիլիսոփայ. կեանքն եւ գործերը, էջ 56:

<sup>66</sup> Վ ա թ դ ա ն Ա թ և է լ ց ի. Ճառք, Ներբողեանք, էջ 286:

<sup>67</sup> Գ. Ա դ ա ն է ա ն ց. նշվ. աշխ., էջ 254:

<sup>68</sup> Մ. (Է.) Շ ի թ ի ն յ ա ն. Հայոց գրերի գյուտն ըստ «Գիրք պատճառաց»-ի, էջ 90:

*ցու, իսկ վերջինս՝ Գրիգոր Արասյանի ուսուցիչն էր) կողմից ստեղծված և ուշագրավ տեղեկություններ պարունակող Դավիթ Անհաղթ փիլիսոփայի «Բարձրացուցէք»-ի տարբեր «պատճառ»-ների առկայությունը վկայում է միջնադարում այս երկի ու նրա հեղինակի հանդեպ եղած մեծ հետաքրքրության և սիրո մասին:*

«ПРИЧИНЫ» «ПАНЕГИРИКА БОГОПРИИМНОМУ СВЯЎТОМУ КРЕСТУ»  
ФИЛОСОФА ДАВИДА НЕПОБЕДИМОГО

АРМИНЕ МЕЛКОНЯՅՆ

Резюме

«Причины» (жанр литературы, который был специальным входом, прежде чем начать комментировать богословский или философский труд) «Панегирика Богоприимному Святому Кресту» содержат интересные свидетельства о жизни и деятельности Давида Непобедимого, о мотивации создания Панегирика. Они также дают некоторые сведения об учениках Саака Партева и Месропа Маштоца, о начале армянской литературы и о других вопросах истории Армении V в. Есть две различные «Причины» этого Панегирика, авторами которых являются Вардан Ахбатечи (XII в.) и его ученик Давид Кобайреци (1150–1220). Григор Абасян (XII–XIII вв.), вставив «Причину» Давида Кобайреци в свою «Книгу причин», отредактировал и прояснил некоторые спорные вопросы, делая свои дополнения.

“THE CAUSES” OF DAVID THE INVINCIBLE PHILOSOPHER’S  
“ENCOMIUM ON THE THEOLEPTIC HOLY CROSS”

ARMINE MELKONYAN

Summary

“The Causes” (is a kind of commentary literature, which was a special entrance before starting to comment a theological or a philosophical writing) of the “Encomium on the Theoleptic Holy Cross” have interesting evidences about the life and activity of David the Invincible, the motivations of the creation of the Encomium. They also give some information regarding the students of Sahak Partev and Mesrop Mashtots, the beginning of Armenian literature and other questions of the history of Armenia in the 5th century. There are two different “Causes” of this Encomium written by Vardan Haghbatetsi (12th century) and his student David Kobayretsi (1150–1220). Grigor Abasyan (12th–13th century) has inserted “The Cause” by David Kobayretsi in his “Book of Causes” clarifying and editing some controversial issues and making his own additions.